'ի Խարասու։ Երբ տասնուերկու տարի անցնելէն վերջը դարձեալ կու գան Հայք 'ի Ղրիմ, և քարուքանդ կը գտնեն աշխարհքը, և երբ կը յիշեն որ յԵկատերինեսլաւ հազարաւոր տեսեարին հողեր, զոր տէրութիւնն ձրիաբար իրենց պարգևել էր, և իրենք կարող չեղան շահուիլ, անշուշտ դարձեալ ոչ սակաւ գանգատ և տրտունջ հասուցել են Տէր Յակոբու ականջը. արդեօք տրտունջ միայն. անտարակոյս նա ժամանակին յորդորած է ժողովուրդը որ մնան յԵկատերինեսլաւ, և աշխատին արդիւնաւորել իրենց տրուած հողը. այլ ռամիկ ժողովուրդն միշտ անցեալը կը յիշէ, և այդ պատճառաւ շատ անգամ իւր ներկայն և ապագայն կը թշուառացընէ։ Եթէ Խարասուցի հայ կաթոլիկ ժողովուրդն մնար յԵկատերինեսլաւ, որ այժմ մեծ և վաճառաշահ քաղաք է, և գիտնար արդիւնաւորել իրեն տրուած հողը, այսօր մեծամեծ հարուստ վաճառականներ պիտի լինէին Հայք, և պիտի ունենային իրենց ձեռքը ցորենաբեր դաշտեր։

Սակայն ըստ օրինակի ռամիկ մարդկան, աւելորդ է անցելոյն վրայ ափսոսալը. այժմ ևս եթէ Հայք չափաւորեալ կենաք շատանալով, աւելի աշխատասիրութեամբ գործեն, դարձեալ իրենց հանգիստ ներկայիս՝ լաւագոյն ապագայ պիտի կարենան պատրաստել իրենց սերնդոց։